

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆԻՑ
ՎԱՆԱԿԱՆԻ

**Մատեն
ողբերգութեան**

Գրիչ՝
ՍԱՅԵԱԴ ՆՈՎԱՅ



**Book of
Lamentations**

By
THE MONK
GRIGOR OF NAREK MONASTERY

transcribed by
SAYAT-NOVA

2025

ՀՏԴ 821.19-1 Գրիգոր Նարեկացի

ԳՄԴ 84(53)-5

Գ 885

Հրատարակության պատրաստեց «Նարեկացի»
արվեստի միությունը:

Ձեռագիրը տրամադրել է Մեսրոպ Մաշտոցի
անվան Մատենադարանը:

Գրիգորի Նարեկայ վանից վանականի
«Մատենան ողբերգության» գրիչ՝ Սայեադ
Նովայ: Նմանահանություն, 2025թ.

Ներկայացված են՝

1. Սայաթ-Նովայի կողմից ընդօրինակված
Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»
ձեռագրի նմանահանությունը:

2. Ծանոթագրություն՝ Կանադայի Հայոց Թեմի
առաջնորդ Բաբկեն Արքեպիսկոպոսի, Դանիել
Երաժիշտի և Պօղոս Եղիազարի ներածական
խոսքը և Լիլիթ Վարդուհանյանի կողմից գրված
ձեռագրի պարունակության նկարագրությունը:

ՀՏԴ 821.19-1 Գրիգոր Նարեկացի

ԳՄԴ 84(53)-5

©ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ Մեսրոպ Մաշտոցի անվան
հին ձեռագրերի ինստիտուտ, 2025

©«Նարեկացի» արվեստի միություն, 2025

ISBN 978-9939-9283-3-3

ՀՏԴ 821.19-1

ԳՄԴ 84(53)-5

Գ 885

The publication was prepared by Naregatsi Art Institute.

The manuscript was provided by Mesrop Mashtots Matenadaran.

The Book of Lamentations by the monk Grigor of Narek Monastery. Transcribed by Sayat-Nova. A true copy, 2025.

The album includes:

1. Sayat-Nova's transcription of the Book of Lamentations by Grigor of Narek ("Narekatsi")
2. The booklet includes an introduction by Archbishop Papken, the Armenian Prelacy of Canada, forwards by Daniel Yerazhisht and Boghos Yeghyazar, and a description of the contents of the manuscript by Lilit Vardumyan

ՀՏԴ 821.19-1

ԳՄԴ 84(53)-5

© MATENADARAN Mesrop Mashtots Research
Institute of Ancient Manuscripts, 2025

© Naregatsi Art Institute, 2025

ISBN 978-9939-9283-3-3



Սրտի անհուն ուրախութեամբ կ'ողջունեն հայ ժողովուրդի մաքուր եւ անարատ խղճմտանքին կանչն ու ձայնը նկատուող, մեզի սփոփանք եւ բժշկութիւն պարգեւող, անուշ բալասանը հանդիսացող՝ Սայաթ-Նովային կողմէ ընդօրինակուած Գրիգոր Նարեկացիի «Մատենան Ողբերգութեան» ձեռագիր աղօթամատենին նմանահանութիւնը: Այս եզակի ձեռագիրը այժմ կը գտնուի Հայաստանի Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրատան մէջ:

Սայաթ-Նովա: Տասընութերորդ դարուն սկիզբը ապրած՝ հայ միջնադարեան քնարերգութեան մեծագոյն ներկայացուցիչը, աշուղական արուեստին հմուտ ու նուիրեալ բանաստեղծը, պալատական երգիչն ու երաժիշտը, որ իր բանաստեղծութիւններով եւ երգերով անդադար շեփորահարեց արդարութիւնը, բարութիւնը, սէրը եւ գեղեցկութիւնը. իր սիրերգութիւններով մարդը դարձուց առանցք, անոր բարի զգացումներուն, թեւասլաց ձգտումներուն եւ ազնիւ գաղափարներուն շեշտադրումով: Սայաթ-Նովան յաճախ բախում ունեցած է ազնուականներուն հետ, բայց իր ոգին երբեք չհամակերպեցաւ անոնց բարբերուն եւ սովորութիւններուն:

Մեր հայեացքը պահ մը սեւեռենք այս մեծ մարդու կեանքի մէկ այլ երեսին, որ շատերուն ծանօթ չէ, եւ կամ շատ քիչ կը խօսուի այդ մասին: Ան եղած է հոգեւորական, ծանօթ՝ Տէր Ստեփանոս քահանայ անունով: Հոգեւոր սպասաւորութեան է լծուած տարբեր եկեղեցիներու մէջ, որպէս հոգեւոր հովիւ, հասնելով իր ժողովուրդի հոգեւոր կարիքներուն: Հոգեւոր ծառայութեան կողքին ան զբաղուած է նաեւ գրչութեամբ: Այս արուեստի բնագաւառէն ներս կ'արժէ յիշել, 1761-թուականին Պարսկաստանի հիւսիսը՝ Գիլան նահանգի Էնգելի քաղաքի եկեղեցւոյ մէջ իր ընդօրինակած Ս. Գրիգոր Նարեկացիի «Մատենան Ողբերգութեան» բանաստեղծական հիասքանչ ոճով գրուած, եւ իւրաքանչիւր հաւատացեալի շրթներով արտասանուած աղօթագիրքը:

Այս ձեռագրի հրատարակութիւնն է սոյն գիրքը, որ ուրախութեամբ կ'ընծայենք բոլորիդ:

Այս առիթով, յատուկ շնորհակալութեան եւ գնահատանքի իմ խօսքս կ'ուզեմ ուղղել «Նարեկացի» արուեստի միութեան հիմնադիր՝ Նարեկ Յարութիւնեանին, որ սոյն գեղեցիկ մտայղացումը ունեցաւ, համագործակցաբար Երեւանի Մատենադարանին, հրատարակութեան յանձնելու այս ձեռագիր Աղօթագիրքի նմանահանութիւնը:

Թող Սուրբին բառերով գրուած եւ մեր ժողովուրդին «Բարձի գիրքը» նկատուած հոգեւոր այս ժառանգութիւնը մարդուն փրկութեան առաջնորդող վաւերական ճանապարհ ու հարազատ յոյսի աղբիւր դառնայ:

Աղօթարար՝
Բաբգէն Արքեպիսկոպոս
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՁԵՌՔՍԵՂՄՈՒՄԸ»

*Թող որ հռչակված հասնի ապգերին,
ժողովուրդներին քարոզվի ի լուր...*

Գրիգոր Նարեկացի

Ժամանակին իտալացի դերասանուհի Աննա Մանյանին տարակուսում էր՝ ասելով. «Ես չեմ պատկերացնում, ինչպե՞ս կարելի է սիրո նամակը սրտի թրթիռով, ձեռքով գրելու փոխարեն թխկթխկացնել գրամեքենայի վրա»: Հիրավի, սիրո թելադրանքով գրված, սրտի զարկերով նախշված ձեռագիրն իր թրթիռով ընթերցողի հոգում իր իսկ արձագանքն է արթնացնում: Նրա հոգեշարժումները նույն ճանապարհն են անցնում, որով ընթացել են գրողի հույզերը: Այսպես է լինում հատկապես աստվածաշունչ խոսքերով համեմված հնագույն, հնաբույր ձեռագրեր ընթերցելիս: Նման ձեռագրեր ընդօրինակելը՝ արտագրելը, աստվածահաճո գործ էր: Ձեռագիր արտագրելն արդեն իսկ աղոթք է: Այս է վկայում հենց սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգութեան» աղոթագրքի 3-րդ գլուխը, ահավասիկ.

*Արա՛ւ այս մատյանն ընթերցողների սրտերը հատակ,
Բժշկի՛ր նրանց հոգիները դու և հանցանքները սրբի՛ր,
Թո՛ղ պարտքները նրանց և արձակիր կապանքները
մեղքի...*

*Թող այս մատյանով և ինձ նվիրվի պաղատանքը նրանց,
Եվ իմ խոսքերով իմ փոխարեն էլ խնկվեն նրանց
հեծեծանքները...*

(փոխադրությունը՝ Մ. Խերանյանի)

խոսքերը, կերպարները աստղերի պես շողշողում են Նարեկացու ոսկեդենիկ պոեզիայի երկնականարում ու արտացոլվում Սայաթ-Նովայի սրտառուչ երգերում:

Նարեկացու մասին Սերգեյ Ավերինցևը գրել է. «Հազվադեպ է պատահում, երբ հանճարը լինում է նաև սուրբ... Ժողովրդի կողմից սրբացված Նարեկացին իր տեսակում եզակի է» (Григор Нарекаци, Книга скорбных песнопений, М., 1988, стр. 11):

Հայ ժողովուրդը մեծագույն սեր է տածում նաև «խալիսի նոքար» Սայաթ-Նովայի նկատմամբ:

Գրիգոր Նարեկացուն նվիրված հոդվածում Սերգեյ Ավերինցևը մեջբերել է կրոնական գործիչ Հերտրուդ ֆոն Լե Ֆորտի հետևյալ տողերը.

*... Ես կյանք եմ՝ բխած տառապանքից,
Ես ուժ եմ՝ բխած տառապանքից,
Ես փառք եմ՝ բխած տառապանքից:
Արհ՛ իմ հոգու մոտ և իմացի՛ր,
Որ գալիս ես քեզ մոտ:*

Իրոք, ընդօրինակելով «Մատյանը», գալով Նարեկացու «հոգու մոտ», Սայաթ-Նովան «եկավ ինքն իր մոտ»: Ինչպես Նարեկացու, այնպես էլ Սայաթ-Նովայի պոեզիայում նույն «հայի կրակված սիրտն է, որ այրվում է՝ երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք» (Հ. Թումանյան): Երկուսի հոգում էլ նույն պայքարն է. ինչպես Ավետարանում է ասվում, «հոժար հոգու» և «տկար մարմնի» միջև ալեկոծվում է «Մատյանի» հերոսի ամբողջ ներաշխարհը:

Դեմքով ժպտուն է, մտքով՝ խոցված.
Երեսը ծիծղուն, և աչքն՝ արտասավագին...
Մի բերանի մեջ երկակի բարբառ՝
Մեկը եղկություն, մյուսը խռովանք.
Միևնույն արտում երկու զգացմունք՝
Մեկը կասկածելի հույսի և մյուսը ճշգրիտ կորստյան...

(փոխադրությունը՝ Մ. Խերանյանի)

Ըստ բանասեր Լևոն Մկրտչյանի, Նարեկացու, ինչպես և Դոստոևսկու ստեղծագործության թեման, երկատված անձն է, որը ձգտում է ձերբազատվել մեղքերից, հաշտվել ինքն իր և Աստծո հետ: Ահավասիկ, Սայաթ-Նովան ասում է.

...Վուրտիդ հարսնիք, վուրտիդըն սուք,
վուրտիդ սոյբաթ խաղ է ըլում.
Վուրտիդ ժամ, վուրտիդ պատարաք,
վուրտիդ սիրով տաղ է ըլում.
Թե վուր հոգուտ կամքն իս անում,
մարմինտ բեղամաղ է ըլում.
Վո՛ւր մե դարդին կու դիմանաս,
դուն ջըրատա՛ր Սայաթ-Նովա:

Ինչպես միկրոտիեզերքում արտացոլվում է մակրոտիեզերքը, այնպես էլ «Մատյանի» գաղափարները, կերպարները, հոգեվիճակները արտացոլվում են Սայաթ-Նովայի պոեզիայում: Օրինակները շատ են:

Նարեկացի.

*...Իր երկու ձեռքում՝ երկու ընպանակ. մեկն արյամբ
լցված, և մյուսը՝ կաթով...*

Սայաթ-Նովա.

*...Թե սուչ ունենամ սրպանե, թե չե նըհախ մի՛
բարգանա. Մե ձեռըտ ջուր, մե ձեռըտ արուն՝ ջալլաթի
ջապա իս, ապիյ:*

Եվս մեկ գուգահեռ.

Նարեկացի.

*Հապա ինձ համար, որ սպասելով Տիրոջ գալատյանն
անպայման, մնացի անպատրաստ բոլորովին,
Որքան և որպիսի վիատեցուցիչ
երգեր պիտի մրմնջեմ ես
Արդ, եթե դատաստանի ահավորությունը
հիշեմ վերստին,
Բազմացնեմ պիտի աշխարանքս ես:*

Իսկ սա ասում է Սայաթ-Նովան.

*...Հուսամ Սայաթ-Նովես, միղկիրըս քավին,
Թե չե դատաստանին յիս ինչ ջուղաբ տամ:*

Մեկ այլ խաղում կարդում ենք.

*Սայաթ-Նովեն կ'ոսէ՝ իսաթեն հասնում է,
Միղավուրնի՛ր, զուլումաթըն հասնում է.
Փա՛ռք Հախ-Տիրուն, արդար դադըն հասնում է՝
Միղքը չափող թարապից վախում իմ:*

<

եկեղեցուց փրկած սրբապատկերը: Այն հարցին, թե այդ հավատավոր կինն ինչպէս է կարողացել այդքան ժամանակ, իրեն վտանգելով, պահել այդ մասունքը, նա պատասխանել էր. «Ես չեմ պահել այդ սրբապատկերը, այլ նա է ինձ պահել»: Այդպես էլ հրափորձութիւնն անցած Նարեկացու անմահ «Մատյանը» դարեր շարունակ պահել ու պահում է մեզ: Տեղին են հնչում բանաստեղծուհի Մարո Մարգարյանի հետևյալ խոսքերը.

*Եվ այս աշխարհում
Այսքան բազմահուն, պինդ ու ժայռակող
Թղթերը պիտի իրենց մեջ պահեն
Կրակն իմ հոգու:*

*Բանաստեղծութիւն,
Սրտավան իմ տող, բոլոր դառնադետ
կորուստների դեմ
Իմ կայանն միակ, իմ ծուխ ու կրակ,
Լույս ու ամոքում:*

Լավ է ասված. «Ձեռագրերը չեն այրվում»:

Հիրավի, Նարեկացու ձեռագիրն իր հրեղեն խոսքով, ինքն է կրակ ու լույս ճառագում ու լուսավորում դեպի երկինք տանող ճանապարհը:

Դանիել Երաժիշտ
*ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
դիրիժոր, կոմպոզիտոր*

Ձեռագրում հանդիպող պատվագրութունները

Ա՛ծ - Աստուած
ա՛յ - Աստուծոյ
ա՛ծդ - Աստուածդ
գա՛յ - գԱստուծոյ
ա՛վ - Աստուծով
ա՛ծաշնորհ - Աստուածաշնորհ
ա՛ծակերտ - Աստուածակերտ
Յ՛ւ Բ՛ւ - Յիսուս Բրիստոս
ք՛սեան - քրիստոսեան
ք՛իւ - Բրիստոսիւ
գք՛ի - գԲրիստոսի
Տ՛ր - Տէր
տ՛ն - Տեառն
տ՛րունի - Տէրունի
տ՛րմբ - Տէրամբ
գ՛ի - Գրիգորի
Ե՛ւմի - Երուսաղէմի
ի՛լի - Իսրայէլի
գի՛լէ - գԻսրայէլէ
ը՛ - ընդ
ը՛ս - ըստ
վ՛ս - վասն
ն՛ր - նորա
ն՛ց - նոցա
ո՛պ - որպէս

վ[՛]ր - վերայ
ա[՛]մ - ամենայն
ա[՛]միւ - ամենայնիւ
ա[՛]մի - ամենայնի
ա[՛]մք - ամենայնք
քաղցրու[՛]ե - քաղցրութեան
հաճութ[՛]ի - հաճութիւն
զօրու[՛]ք - զօրութեամբ
արքայու[՛]ի - արքայութիւն
խռովու[՛]իս - խռովութիւնս
ապստամբութ[՛]ե - ապստամբութեան
ըմբեանե[՛]լ - ըմբերանեալ
ժամադրութ[՛]ես - ժամադրութեանս
պայծառութ[՛]եդ - պայծառութեանդ
կործանե[՛]լս - կործանեալս
ողորմութ[՛]եադ - ողորմութեանդ
ստեղծաբանութ[՛]ք - ստեղծաբանութեամբ
ճշմարտութ[՛]ին - ճշմարտութիւնն
փրկութի[՛]իդ - փրկութիւնդ
հեծութ[՛]իք - հեծութիւնք
ձանձրութ[՛]ե - ձանձրութենէ
նմանութ[՛]եց[՛]ն - նմանութեանցն
աննութ[՛]զելի - աննուագելի
մ[՛]տչելի - մատչելի
յառ[՛]ջ - յառաջ

Besides his spiritual services, he was also interested in writing or copying. It is worth mentioning that in 1761, when he was serving in the church of Enzeli of the Kilan Province in Northern Persia, he transcribed Saint Narekatsi's Book of Lamentations, wonderfully written in the poetic genre and recited by the lips of every believer.

This book, which we gladly present to you, is the publication of that manuscript.

On this special occasion, I convey my thankfulness and appreciation to Mr. Nareg Hartounian, the founder of the Naregatsi Art Institute, who had the wonderful idea of publishing a copy of the famous prayer book in collaboration with the Mesrop Mashtots Matenadaran.

May this spiritual inheritance, written in the words of the Saint and considered as our people's "bedside" book, serve as an authentic way to man's salvation and as a genuine source of hope.

Prayerfully,
Archbishop Papken
Prelate
Armenian Prelacy of Canada

